«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԽԹԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Սույն փաստաթուղթը մշակվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ԻՀԱ) «Ազդարարման բազմակողմանի խթանում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) աջակցությամբ՝ Եվրոպական Միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն բարեվարքության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակներում:

Սույն փաստաթղթում արտահայտված է հեղինակի՝ ԻՀԱ դիրքորոշումը, որի համընկնումը ԲԿԳ և ԵՄ դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԵՐԵՎԱՆ, 2023

https://armla.am/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 2
Միջազգային փորձ և միջազգային ստանդարտներ 3
Ա) ՏՀՋԿ ստանդարտներ 3
Բ) ԵՄ ստանդարտներ 5
Գ) Միջազգային պրակտիկա 6
Ազգային օրենսդրության և պրակտիկայի վերլուծություն 13
Ա. Ազդարարման հետ կապված վիճակագրության վարման իրավական շրջանակը 13
Բ. ՄԻՊ-ի դերը՝ ազդարարման հետ կապված վիճակագրության վարելու հարցում 18
Գ. Հայաստանում գործող ազդարարման հարթակները և վարվող վիճակագրությունը 21
Եզրակացություն 30
Ա. Միջազգային փորձ և միջազգային ստանդարտներ 30
Բ. Ազգային օրենսդրության և պրակտիկայի վերլուծություն 31
Առաջարկություններ 34
Ա. Վիճակագրության համակարգի կատարելագործմանն ուղղված ընդհանուր առաջարկություններ 34
Բ. Վիճակագրության «Ստացված ազդարարումներ» բաժնի տվյալների շրջանակը 35
Գ. Վիճակագրության «Ազդարարման վերաբերյալ տրամադրված խորհրդատվություն և/կամ պարզաբանումներ» բաժնի տվյալների շրջանակը 36

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՏՄ	ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ԵՄ	Եվրոպական միություն
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանց

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Ազդարարման հետ կապված վիճակագրության վարման միջազգային փորձը միատարր չէ։ Տարբեր երկրներ՝ իրենց ազգային համատեքստից և իրավական շրջանակից ելնելով մշակել են վիճակագրության հավաքագրման և վարման իրենց մոդելը։ Սրա հետ մեկտեղ, միջազգային պրակտիկայում առկա են համընդհանուր և ժամանակի ու պրակտիկայի ընթացքում փորձարկված գործիքներ ու չափանիշներ, որոնք ուսուցանելի են և կարող են կիրառվել այլ երկրների կողմից։ Դրանցից հատկապես ուշադրության են արժանի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից (այսուհետ՝ ՏՀԶԿ) և Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) կողմից սահմանված ստանդարտները։ Այսպես.

Ա) ՏՀԶԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի գնահատման շրջանակի «Ազդարարման ոլորտի» թիվ 3 ինդիկատորի՝ *«Ազդարարների պաշտպանության հատուկ գործակալությունը ունի օրենքով սահմանված հստակ լիազորություններ և գործում է»*[1] 3.2-ի (C) հենանիշը սահմանում է հետևյալ պահանջը. *«Վերահսկել և գնահատել ազդարարների պաշտպանության ազգային մեխանիզմների արդյունավետությունը՝ ազդարարումների (հաղորդումների) ներկայացման եղանակների օգտագործման և տրամադրված պաշտպանության ձևերի վերաբերյալ <u>վիճակագրության հավաքագրմամբ</u>»*[2]:

Ըստ ՏՀԶԿ վերոնշյալ մոնիթորինգի ազդարարման ոլորտի թիվ 3.2-ի (C) հենանիշի՝ *ազդարարներին տրամադրվող պաշտպանության միջոցների արդյունավետությունը մշտադիտարկելու համար, իրավասու մարմինը պետք է նվազագույնը հնարավորություն ունենա <u>տվյալներ հավաքել</u> արտաքին ազդարարման եղանակով ստացված ազդարարումների քանակի և ազդարարներին տրամադրվող պաշտպանության մասին:*

---

[1] ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, մոնիթորինգի 5-ի փուլ։ Գնահատման շրջանակ։ Էջեր 35-36, հասանելի է՝ https://www.oecd.org/investment/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Assessment-Framework-ENG.pdf

[2] ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր. Ուղեցույց։ Էջ 50, հասանելի է՝ https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Guide-ENG.pdf

ՏՀԶԿ-ի «Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլ պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում» զեկույցի **Հենանիշ 4.3.2-ի** սահմանում է հետևյալ պահանջը՝ *«Մանրամասն վիճակագրություն և այլ տեղեկություններ ազդարարների հաղորդումների և ազդարարների պաշտպանության վերաբերյալ պարբերաբար հավաքվում, վերլուծվում և օգտագործվում են որպես հակակոռուպցիոն քաղաքականության բարեփոխման հիմք, հրապարակվում է նաև համախմբված տեղեկատվություն»:* Զեկույցով որպես **Հենանիշ 4.3.2-ին անհամապատասխանություն** նշվել է, որ Ուկրաինայում ազդարարների հաղորդումների, պաշտպանության միջոցների տրամադրման և գաղտնիության խախտման վերաբերյալ վիճակագրությունը դիսագրեգացված (տեսակավորված) չէ և ամբողջությամբ չի համապատասխանում չափանիշի պահանջներին [3] : Մասնավորապես, ազդարարների պաշտպանության վերաբերյալ դիսագրեգացված (տեսակավորված) վիճակագրական տվյալներ (ըստ պաշտպանության տեսակների) չեն հավաքագրվում: Դատական գործընթացների ընթացքում ազդարարների կողմից պահանջվող պաշտպանության տեսակների մասին տեղեկատվությունը նույնպես համակարգված կերպով չի հավաքագրվում [4] : Ի լրումն, Ուկրաինայի Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը հաշվառում է ազդարարների պաշտպանության հետ կապված դատական վարույթների քանակը, ազդարարների պաշտպանությունն ապահովելուն ուղղված Կոռուպցիայի կանխարգելման օրենքով նախատեսված երաշխիքների խախտումների և դրա հետ կապված վարչական իրավախախտումների քանակը: Ուկրաինան հավաքագրում է ազդարարի հաղորդման արդյունքում հարուցված քրեական գործերի թիվը, սակայն դրանք ներկայացվում են որպես կոռուպցիայի վերաբերյալ ընդհանուր հաղորդումներ (օրինակ՝ քաղաքացիների բողոքները), և որպես այդպիսին չեն համարվում ազդարարում: Այնուամենայնիվ, հենանիշում ներառված որոշ տվյալների համար տվյալները հասանելի չեն, մասնավորապես՝ ներքին և արտաքին ազդարարման եղանակներով ստացված ազդարարումների քանակը, պաշտպանության միջոցների տրամադրման վերաբերյալ ներկայացրած պահանջագրերի քանակը, ինչպես նաև գաղտնիության խախտման հետ կապված վիճակագրությունը:

5-րդ փուլ պիլոտային նույն զեկույցի **Հենանիշ 4.1.2-ը** սահմանում է հետևյալ պահանջը՝ *«Ազդարարների մասին օրենսդրությունը տարածվում է ինչպես հանրային (պետական), այնպես էլ մասնավոր հատվածի աշխատողների վրա»:* Ըստ այդմ՝ ազդարարների պաշտպանությունը տարածվում է ցանկացած անձի վրա: Ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային հատվածի

---

[3] ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: էջ 61, հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/b1901b8c-en.pdf?expires=1697202384&id=id&accname=guest&checksum=984354AD1D6CF0967634994B8BFC6385

[4] Տե՛ս նույն տեղում:

աշխատակիցները կարող են ազդարարման հաղորդում ներկայացնել և պաշտպանություն ստանալ վնասակար գործողությունների դեպքում: Զեկույցով որպես **Հենանիշ 4.1.2-ի անհամապատասխանություն** նշվել է, որ վիճակագրություն ըստ հաշվետու անձանց (մասնավոր կամ պետական հատված) հաղորդումների քանակի վերաբերյալ չի վարվում[5]:

5-րդ փուլ պիլոտային նույն զեկույցի **Հենանիշ 4.3.1-ը** սահմանում է հետևյալ պահանջը՝ *«Հիմնական շահագրգիռ կողմերի շրջանում հանրային լայն ընկալում առ այն, որ հաղորդումները ներկայացնելու եղանակները վստահելի են և արդյունավետ»:* Զեկույցով որպես **Հենանիշ 4.3.1-ի անհամապատասխանություն** նշվել է, որ ազդարարման եղանակների մասին իրազեկվածությունն ու վստահությունը առ այն, որ այդ եղանակները անվտանգ և նշանակալի են Ուկրաինայում, բացակայում են: Համաձայն զեկույցի՝ ակնկալվում է, որ Կոռուպցիայի մասին ծանուցումների միասնական պորտալ կստեղծվի[6] առաջիկայում և այն կդյուրացնի հաղորդումների ներկայացման գործընթացը, և կամրապնդի հաղորդումների ներկայացման եղանակների գաղտնիության և անվտանգության երաշխիքը: Միասնական պորտալը և ազդարարման ու պաշտպանության միջոցների մասին մանրամասն իրազեկվածությունն ու վիճակագրությունը քաղաքացիական հասարակության կողմից նշվել են որպես գործոններ, որոնք կարող են դրականորեն բարձրացնել ազդարարման համակարգի՝ վստահելի և արդյունավետ լինելու ընկալումը[7]:

Բ) ԵՄ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Հարկ է նշել, որ 2019 թվականի հոկտեմբերի 23-ին ԵՄ խորհրդարանն ընդունել է No 2019/1937 հրահանգը, որը սահմանում է **ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչներ** [8] : Վերջինիս համաձայն՝ անդամ պետություններից պահանջվում է Եվրոպական հանձնաժողովին տրամադրել հիշյալ հրահանգի

---

[5] ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: էջ 53, հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/b1901b8c-en.pdf?expires=1697202384&id=id&accname=guest&checksum=984354AD1D6CF0967634994B8BFC6385#page=53&zoom=100,90,132

[6] Հարկ է նշել, որ 2023 թվականի սեպտեմբերի 6-ին Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը արդեն գործարկել է ազդարարման միասնական էլեկտրոնային պորտալը, որը հանդիսանում է ներքին ազդարարման միջոց:

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 60

[8] Եվրոպական միության գրասենյակ: Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ (EU) 2019/1937 Հրահանգ՝ ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչների մասին: Հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32019L1937

իրականացման և կիրառման վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Մասնավորապես, անդամ պետությունները տարեկան կտրվածքով հանձնաժողով են ներկայացնում հրահանգի *«Արտաքին ազդարարում և հետադարձ կապ»* վերտառությամբ III-րդ գլխում նշված հաղորդումների վերաբերյալ հետևյալ վիճակագրությունը, եթե դրանք առկա են անդամ պետության կենտրոնական մակարդակում.

a) իրավասու մարմինների կողմից ստացված հաղորդումների քանակը.
b) այդ հաղորդումների արդյունքում հարուցված վարույթների և դատավարությունների քանակը, դրանց արդյունքները,
c) գնահատված ֆինանսական վնասը և վարույթների ու դատավարությունների արդյունքում այդ գնահատված վնասների հետևանքով վերականգնված գումարները, եթե այդպիսիք պարզվել են:

Նախընտրելի է թվարկված տեղեկությունները ներկայացնել խմբավորված:

Հարկ է նաև նշել, որ տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ հանձնաժողովը մինչև 2023 թվականի դեկտեմբերի 17-ը հաշվետվություն է ներկայացնելու Եվրոպական հանձնաժողովին և Խորհրդին՝ հրահանգի կատարման և կիրառման վերաբերյալ:

Այնուհետև, հանձնաժողովը մինչև 2025 թվականի դեկտեմբերի 17-ը, հաշվի առնելով իր կողմից ներկայացվող հրահանգի կատարման և կիրառման վերաբերյալ հաշվետվությունը և անդամ պետությունների կողմից ներկայացված վիճակագրությունը, զեկույց է ներկայացնելու Եվրոպական հանձնաժողովին և Խորհրդին՝ գնահատելով ազգային իրավունքի ազդեցությունը՝ հրահանգի լույսի ներքո: Զեկույցը գնահատելու է հրահանգի կիրառման եղանակները և դիտարկելու է լրացուցիչ միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, փոփոխություններն ու լրացումները՝ նպատակ ունենալով ընդլայնել հրահանգի գործողության շրջանակը միության հետագա ակտերի կամ ոլորտների վրա, մասնավորապես՝ աշխատողների առողջությունն ու անվտանգությունը ապահովող աշխատանքային պայմանները պաշտպանող միջավայրի բարելավումը: Ընդ որում, նշված զեկույցներն ու հաշվետվությունները լինելու է հրապարակային և հասանելի:

Ի լրումն վերը նշված ազդեցության գնահատման, զեկույցը պետք է գնահատի նաև թե ինչպես են անդամ պետություններն օգտվել առկա համագործակցության մեխանիզմներից և ինչպես են վերջիններս համագործակցում միջսահմանային հարթության վրա տեղի ունեցած խախտումների դեպքում:

Գ) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Ստորև ներկայացվում են տարբեր երկրների օրինակներ ազդարարման հետ կապված վիճակագրության վերաբերյալ:

ՍԼՈՎԱԿԻԱ: Ազդարարների պաշտպանության գրասենյակը ստեղծվել է Սլովակիայի «Ազդարարների պաշտպանության մասին» թիվ 54/2019 օրենքի հիման վրա՝ որպես բյուջետային կազմակերպություն, որը հաշվետու է Սլովակիայի Հանրապետության Ազգային խորհրդին (խորհրդարանին): Այն անկախ պետական մարմին է՝ համապետական լիազորություններով: Գրասենյակը [9] պաշտոնապես սկսել է գործել 2021 թվականի սեպտեմբերի 2-ին: Նրա գործունեությունը կենտրոնացած է ազդարարների պաշտպանության և հարակից օրակարգի վրա[10]: Ըստ նշված օրենքի՝ յուրաքանչյուր տարի հաղորդումներ ստանալու համար պատասխանատու մարմինը, իր իրավասությունների շրջանակներում, հաշվառում է նախորդ օրացուցային տարվա վիճակագրական տվյալները, որը ներառում է հետևյալ տեղեկությունները.

a) հաղորդումներ ստանալու համար պատասխանատու մարմնի կողմից ստացված հաղորդումներ քանակը.
b) «a/ա» կետում նշված հաղորդումների հիման վրա հարուցված վարչական իրավախախտումների և քրեական գործերի վարույթների քանակը և դրանց արդյունքները.
c) գնահատված վնասը, եթե այդպիսին հայտնաբերվել է, և ստացված հաղորդումների հիման վրա իրականացված ստուգումների (աուդիտի), քրեական կամ վարչական վարույթների հետևանքով վերականգնված գումարները:

Գրասենյակն ունի ազդարարմանն առնչվող ընդհանուր վիճակագրություն վարելու և հրապարակելու պարտավորություն: Գրասենյակի 2022 թվականի տարեկան հաշվետվությունը, հիմք ընդունելով թիվ 54/2019 օրենքի կարգավորումները, վիճակագրական տվյալները տրոհել է ըստ կարևոր դասակարգումների և ներառում է այնպիսի ընդգրկուն վիճակագրական տվյալներ, ինչպիսիք են՝

- ազդարարում (ծանուցում) ներկայացրած անձանց թիվը, ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց դասակարգումների,
- ազդարարումը ներկայացած միջոցը, օրինակ՝ թեժ գծի միջոցով,
- ազդարարումներով վարած գործերի քանակը,
- տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների քանակը,

---

[9] www.oznamovatelia.sk

[10] Սլովակիայի Ազդարարների պաշտպանության գրասենյակ, Ազդարարների պաշտպանության Գրասենյակի 2022 թվականի տարեկան հաշվետվություն: Հասանելի է՝ https://www.oznamovatelia.sk/wp-content/uploads/2023/06/annual-report-2022.pdf

- տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների բնույթը (օրինակ՝ խորհրդատվություն ազդարարում ներկայացնելու և հաղորդում կազմելու կարգի մասին),
- ազդարարման դեպքերի բնույթը (օրինակ՝ գործատուների կողմից կատարած վնասակար գործողությունները, հարկերի խուսափում և այլն)
- ազդարարի կարգավիճակ ստացած անձանց թիվը,
- ազդարարների նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցների թիվը,
- ազդարարների նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցների բնույթը։

Այսպես, նշված վիճակագրական տվյալների հիման վրա, հանրությանը ներկայացվող հաշվետվությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները. 2022 թվականի ընթացքում դիմել է 377 անձ, որից թեժ գծի միջոցով ստացվել է 157 զանգ։ Գրասենյակը վարել է 220 գործ, որոնցից 96-ն ընկել է թիվ 54/2019 օրենքով սահմանված՝ իր իրավասությունների շրջանակում։ Սա ներառում է ստացված ազդարարումները, ազդարարների պաշտպանության օրակարգը, ինչպես նաև, օրինակ, իրավաբանական խորհրդատվությունը գործատուներին և այլ իրավաբանական անձանց։ Ազդարարների հետ կապված 63 դեպքերից 17-ը հանգեցրել են գործատուների կողմից վնասակար գործողությունների։ Տրվել է ազդարարի 9 նոր պաշտպանված կարգավիճակ, որոնցից 2-ը՝ Գրասենյակի աջակցությամբ[11]։

2022 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին անձիք 39 արտաքին ազդարարումներ են ներկայացնել Գրասենյակին, որից 28 ազդարարները համապատասխանել են թիվ 54/2019 օրենքով սահմանված՝ ազդարար ճանաչվելու պայմաններին։ Նույն ժամանակահատվածում Գրասենյակը ստացել է 16 անանուն ազդարարում, որից 13-ով նրանք ներկայացրել են անանուն ազդարարում, և 3-ի դեպքում անանուն ազդարարները ստացել են ազդարարման մասին հաղորդում կազմելու վերաբերյալ խորհրդատվություն[12]։ Այլ կարևոր տեղեկությունները հասանելի են Գրասենյակի 2022 թվականի տարեկան հաշվետվությամբ։

ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ։ Ազդարարման հարցերով իրավասու մարմինը անկախ վարչական մարմին է[13], որը հաշվետու է միայն խորհրդարանին (ամենամյա հաշվետվության տեսքով) և Ներքին գործերի և Թագավորության հարաբերությունների նախարարին իր ֆինանսական գործառնությունների համար։ Ներքին գործերի և թագավորության հարաբերությունների

---

[11] Սլովակիայի Ազդարարների պաշտպանության գրասենյակ, Ազդարարների պաշտպանության Գրասենյակի 2022 թվականի տարեկան հաշվետվություն։ Էջ 18, հասանելի է՝ https://www.oznamovatelia.sk/wp-content/uploads/2023/06/annual-report-2022.pdf ,

[12] Տե՛ս նույն տեղում, էջեր 20-21

[13] https://www.huisvoorklokkenluiders.nl/english

նախարարը իրավասու չէ որոշել մարմնի քաղաքականությունը և բեկանել մարմնի ընդունած որոշումները, ինչպես նաև տեղեկատվություն պահանջել այն հարցերի վերաբերյալ, որոնցով զբաղվում է մարմինը: Մարմնի խորհուրդը բաղկացած է նախագահից և առավելագույնը չորս անդամից, որոնք նշանակվում են թագավորական հրամանագրով: Մարմնի կառավարմանն աջակցում է գրասենյակը:

Ի թիվս այլ լիազորությունների, մարմինը նաև վարում և հրապարակում է իր ազդարարման հետ կապված վիճակագրություն, որը ներառում է հետևյալ տվյալները.

- քննություն իրականացնելու վերաբերյալ ներկայացրած ազդարարումների թիվը,
- ընթացիկ տարում ստացված ազդարարումների թիվը, որոնց ուղղությամբ միջոցներ են ձեռնարկել,
- նախորդ տարիներում ստացված այն ազդարարումների թիվը, որոնց ուղղությամբ միջոցներ են ձեռնարկել ընթացիկ տարում,
- ազդարարումներ ներկայացրած դեպքերի բնույթը (ներառում է, սակայն չի սահմանափակում, թե քանիսնն է եղել ենթադրյալ իրավախախտումների մասով, քանիսը՝ վնասակար գործողությունների կատարման վերաբերյալ),
- ազդարարման եղանակը և միջոցը,
- ազդարարումներով վարած գործերի քանակը,
- գրավոր կարգով տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների քանակը,
- բանավոր կարգով տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների քանակը,
- տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների բնույթը (օրինակ՝ խորհրդատվություն ազդարարում ներկայացնելու և հաղորդում կազմելու կարգի մասին),
- ազդարարման դեպքերի բնույթը (օրինակ՝ գործատուների կողմից կատարած վնասակար գործողությունները, հարկերի խուսափում և այլն)
- ազդարարման արդյունքները,
- համեմատական վիճակագրական տվյալներ մյուս տարիների հետ:

Այսպես, նշված վիճակագրական տվյալների հիման վրա, հանրությանը ներկայացվող հաշվետվությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները. 2021 թվականին մարմինը ստացել է քննություն իրականացնելու 21 դիմում: 2016-2021 թվականներին ավարտված և ընթացիկ քննությունների 16%-ը վերաբերում է ենթադրյալ իրավախախտումներին, 53%-ը՝ վնասակար գործողություններին և 31%-ը՝ երկուսին էլ: 2021 թվականին մարմինը վարել է 289 խորհրդատվության գործ, որոնցից 208-ի կապակցությամբ ստացել է խորհրդատվության նոր գրավոր հարցում, իսկ 81-ը՝ առկախ գործեր նախորդ տարիներից: 208 խորհրդատվության հարցումներից 11-ում հաստատվել է ենթադրյալ հակաօրինական արարք, որը կարող է վնասել

հանրային շահերին, իսկ նախորդ տարիներից առկախ 81 գործից՝ 19-ում, ընդհանուր առմամբ՝ 30 խորհրդատվական գործընթաց: Մարմնի խորհրդականները տվյալ տարվա ընթացքում պատասխանել են 249 հեռախոսազանգերի: 2021 թվականին մարմինը պատասխանել է գործատուների 179 հարցի: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ իր գործունեության առաջին տարիներին նշյալ թվերը շատ ավելի մեծ են եղել, օրինակ՝ 2017 թվականին՝ 1430 հարցի պատասխան: Այլ կարևոր տեղեկությունները հասանելի են Մարմնի տարեկան հաշվետվություններով[14]:

ՈՒԿՐԱԻՆԱ: Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը գործում է 2016 թվականից, «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հիման վրա: Այն հատուկ կարգավիճակ ունեցող կենտրոնական գործադիր մարմին է, և պատասխանատու է Ուկրաինայում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման, և կոռուպցիայի կանխարգելման համար[15]:

Կոռուպցիայի կանխարգելման մասին օրենքի կիրարկումը մշտադիտարկելու իր մանդատի շրջանակներում մարմինը կազմում է տարեկան հաշվետվություն և դրանում ընդգրկում է ազդարարման և կոռուպցիայի մասին ծանուցումների (քաղաքացիների դիմումների) ընդհանուր վիճակագրությունը, այդ թվում՝

- ստացված ազդարարումների քանակը,
- կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտված անձանց մասին տեղեկատվությունը,
- կոռուպցիոն իրավախախտումների հետևանքով պատճառված վնասի չափի մասին տեղեկատվությունը,
- տրամադրված խորհրդատվության քանակը,
- այն անձանց թիվը, որոնց նկատմամբ կիրառվել են պաշտպանական միջոցներ՝ վնասակար գործողություններից պաշտպանելու նպատակով,
- վնասակար գործողություններից ազդարարների իրավունքներ վերականգման թիվը:

Ուկրաինայի օրենսդրությամբ ազդարարում է հանդիսանում (ա) քրեական հետապնդման մարմիններին ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ներկայացված

---

[14] Տե՛ս օրինակ Մարմնի 2021 թվականի հաշվետվությունը, հասանելի է՝ https://www.huisvoorklokkenluiders.nl/Publicaties/jaarverslagen/2022/03/15/annual-report-dwa-2021

2017 թվականի հաշվետվությունը, հասանելի է՝ https://www.huisvoorklokkenluiders.nl/Publicaties/jaarverslagen/2018/03/15/annual-report-2017---dutch-whistleblowers-authority

[15] https://nazk.gov.ua/en/about-nacp-2/

հաղորդումները և (բ) ազդարարի կողմից՝ կոռուպցիայի, կոռուպցիայի հետ կապված իրավախախտման և «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի այլ խախտումների վերաբերյալ՝ իր աշխատանքային, մասնագիտական, տնտեսական, հասարակական, գիտական գործունեության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները ներքին, արտաքին կամ հանրությանն ազդարարման եղանակով հայտնելը: Արդյունքում, «բ» խմբին պատկանող, սակայն՝ աշխատանքային, մասնագիտական, տնտեսական, հասարակական, գիտական գործունեության արդյունքում ձեռք չբերված տեղեկությունները դիտարկվել են որպես քաղաքացիների բողոքներ, և ոչ թե ազդարարում:

2020 թվականին Ոստիկանության կողմից ստացվել են 494, Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի կողմից՝ 15 ազդարարումներ, իսկ Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության կողմից՝ 3469 ծանուցում կոռուպցիայի մասին, որոնց 11%-ն է որակվել որպես ազդարարում: Բացի այդ, 2020 թվականին մարմինը տրամադրել է 49 խորհրդատվություն, աջակցել ազդարարներին՝ մասնակցելով 12 դատական լսումների և արձակել է 5 հրաման՝ վերականգնելու ազդարարի իրավունքները վնասակար գործողություններից[16]:

Գործակալությունը պետք է ապահովի կոռուպցիայի վերաբերյալ ստացված հաշվետվությունների ցանկը և կոռուպցիայի վերաբերյալ հաղորդումների քանակի, կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտված անձանց, կոռուպցիոն հանցագործությունների հետևանքով պատճառված վնասների և վնասի չափի մասին վիճակագրությունը, ինչպես նաև անձանց թիվը, որոնց նկատմամբ կիրառվել են պաշտպանական միջոցներ՝ իրենց բացահայտումների հիմքով վնասակար գործողություններից պաշտպանելու նպատակով: Դատախազական ստորաբաժանումները, Ուկրաինայի ազգային ոստիկանությունը, Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոն, Հետաքննությունների պետական բյուրոն և Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը ապահովում են նշված ներքին ազդարարման համակարգի գործարկումը Ազդարարման հաղորդումների միասնական հարթակի (պորտալ) միջոցով: Այս համակարգով ներքին ազդարարումը ներկայացվելուց հետո, տեղեկատվությունը ստանում են կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու ղեկավարները կամ լիազորված անձինք, ինչպես նաև վերը թվարկված մարմինները[17]: Հարկ է նշել, որ 2023 թվականի սեպտեմբերի 6-ին Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը գործարկեց ազդարարման

---

[16] ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: Էջ 61, հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/b1901b8c-en.pdf?expires=1697202384&id=id&accname=guest&checksum=984354AD1D6CF0967634994B8BFC6385

[17] https://anticor.hse.ru/en/main/news_page/corruption_whistleblower_law_enters_into_force_in_ukraine

միասնական էլեկտրոնային պորտալը, որը հանդիսանում է ներքին ազդարարման միջոց[18]: Այս պորտալը կազմակերպության աշխատակիցներին թույլ է տալիս անանուն հաղորդումներ ներկայացնել իրենց կառույցներում առկա կոռուպցիայի մասին: Ստացված հաղորդումները անհապաղ ուղարկվում են կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման համար պատասխանատու մարմիններին ղեկավարներին կամ լիազորված ստորաբաժանումներին (կամ լիազորված անձանց): Պորտալն առաջարկում է ազդարարման ներկայացման անանուն կամ տվյալները բացահայտելու միջոցով հաղորդումներ ներկայացնելու հնարավորություն: Յուրաքանչյուր դեպքում երաշխավորված է գաղտնիության իրավունքը: Այնուամենայնիվ, եթե անձը հաղորդում է անանուն եղանակով, վերջինս չի կարող ակնկալել պարգևատրում (որպես խրախուսման միջոց) և չի կարող օգտվել ազդարարի կարգավիճակից բխող իրավունքներից:

[18] https://nazk.gov.ua/en/news/on-september-6-the-nacp-launches-the-unified-whistleblower-reporting-portal/?fbclid=IwAR2X69mD8aAwik3Da2ReV-sVh8fT-6eVKCESs_4USFDqp86Xj5-L104rF-Q

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենքի[19] 9.1-րդ հոդվածի համաձայն՝ (1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ-երը) վարում են ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրություն իրենց և իրենց ենթակա մարմիններում ստացված հաղորդումների վերաբերյալ, որի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: (2) Վիճակագրության մեջ պետք է զետեղված լինեն ազդարարման վերաբերյալ տեղեկությունները ըստ հետևյալ տողերի՝ ներքին, արտաքին, հանրությանը և միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված:

Ի կատարումն հիշյալ կարգավորման՝ ՀՀ կառավարությունը 15.03.2018 թվականի ընդունել է «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշումը[20]: Որոշման մեջ ՀՀ կառավարությունը 06.07.2023 թվականի N 1148-Ն որոշմամբ կատարել է լրացումներ և փոփոխություններ[21]: Այս նոր որոշմամբ, ի թիվս այլնի, Որոշմանը ավելացվել է N 3 հավելվածը, որը նախատեսում է պետական մարմիններում և ՏԻՄ-երում և դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը (այսուհետ՝ Վիճակագրության վարման կարգ): Միաժամանակ, պետք է նշել, որ այս որոշմամբ սահմանված չեն կարգավորումներ, թե օրինակ՝ ինչ ընթացակարգ է գործում, եթե ազդարարումը ներկայացված է ոչ թե ազդարարման հարցերով պատասխանատուին, այլ՝ ազդարարի անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի:

---

[19] «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքը հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131

[20] ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշումը հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180232

[21] ՀՀ կառավարության 06.07.2023 թվականի N 1148-Ն որոշումը հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180199

Վերադառնալով վիճակագրության վարմանը, պետք է նշել, որ վարման կարգով կարգավորվում է իրավասու մարմիններում, ներքին, արտաքին, հանրությանը, ինչպես նաև ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով արված ազդարարման հաղորդումների վիճակագրության վարման հետ կապված հարաբերությունները: Ըստ այդմ՝ իրավասու մարմինները [22] ներքին, արտաքին, հանրությանը, ինչպես նաև ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով արված ազդարարման հաղորդումների մասին վարում են **տարեկան վիճակագրություն**: Վիճակագրությունը վարվում է էլեկտրոնային եղանակով և հաստատվում էլեկտրոնային ստորագրությամբ՝ իրավասու մարմնի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից: Վիճակագրության վարման աշխատանքներն իրականացվում են պատասխանատու անձի [23] կողմից և հսկողության ենթարկվում իրավասու մարմնի, իրավասու մարմնի ղեկավարի կողմից: Վարվող վիճակագրությունն ամփոփվում է տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևին համապատասխան, որտեղ ներառված են հետևյալ չորս բաժինները.

Առաջին բաժնում նշվում է ազդարարման հաղորդումների ընդհանուր քանակը:

Երկրորդ բաժնում նշվում է ազդարարման հաղորդումներ իրականացրած սուբյեկտների ընդհանուր թիվը:

Երրորդ բաժնում նշվում են՝ (ա) ազդարարման հաղորդման դեպքը՝ ըստ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի[24], (բ) ազդարարման հաղորդման հիմքով հարուցված վարույթի արդյունքում ընդունված ակտերի ընդհանուր թիվը:

Չորրորդ բաժնում նշվում են՝ (ա) ազդարարին տրամադրված պաշտպանության միջոցի տեսակը [25] , (բ) ազդարարին պաշտպանություն տրամադրելու մերժման դեպքերի

---

[22] «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ ***իրավասու մարմիններն են՝*** *Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական և համայնքային կազմակերպություններ, հանրային նշանակության կազմակերպությունները: Հանրային նշանակության կազմակերպությունը դա հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունն է: Մասնավոր ոլորտի կազմակերպությունները չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին:*

[23] Պատասխանատու անձը «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքով նախատեսված մարմնի կամ կազմակերպության ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով նշանակված աշխատողն է:

[24] Ըստ «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքի՝ ազդարարման հաղորդման դեպքերն են՝ 1) կոռուպցիոն բնույթի դեպք, 2) շահերի բախման և դրա հայտարարագրման պահանջի խախտման դեպք, 3) վարքագծի կանոնի խախտման դեպք, 4) անհամատեղելիության պահանջի խախտման դեպք, 5) այլ սահմանափակումների խախտման դեպք, 6) հայտարարագրման հետ կապված խախտման դեպք, 7) հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ դեպք:

[25] Ազդարարների պաշտպանության իրավունքը և միջոցները ներառում են՝ 1. Անձնական տվյալների գաղտնիություն, 2. Վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք, 3. Մարդու իրավունքների պաշտպանից խորհրդատվական բնույթի

ընդհանուր թիվը, (գ) ազդարարի անձի գաղտնիության պահպանման պարտականության խախտման դեպքերը, (դ) ազդարարի նկատմամբ իրականացված վնասակար գործողությունների վերացմանն ուղղված միջոցառումների թիվը:

Յուրաքանչյուր բաժիններում նշվում են կոնկրետ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ըստ բաժինների վիճակագրական տվյալներ ունենալու համար: Ստորև ներկայացվում են յուրաքանչյուր բաժնում ներառվող տեղեկությունները՝ ըստ էլեկտրոնային վիճակագրական հաշվետվության ձևի.

ԲԱԺԻՆ 1

Տողի համար	**Ազդարարման հաղորդումների ընդհանուր քանակը**	**Այդ թվում**						
		Ներքին, որից		**Արտաքին**, որից		**Հանրությանը**, որից		**Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին**
1.	2.	3.		4.		5.		
		Բանավոր		Բանավոր		Բանավոր		
		Գրավոր		Գրավոր		Գրավոր		

ԲԱԺԻՆ 2

Տողի համար	Ազդարարման հաղորդումներ իրականացրած **սուբյեկտների**	Ազդարարման հաղորդումներ իրականացրած **սուբյեկտների**	Այդ թվում			
			Ներքին, որից	**Արտաքին**, որից	**Հանրությանը**, որից	**Ազդարարման միասնական**

գաղտնի խորհրդատվություն իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք, 4. Հատուկ պաշտպանություն, այդ թվում՝ (1) պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը. (2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը. (3) պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը.

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը. (5) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը. (6) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը. (7) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը, 5. Այլ իրավունքներ և միջոցներ:

	ընդհանուր թիվը	**թիվը՝ ըստ սուբյեկտների տեսակի**								**էլեկտրոնային հարթակին**	
1.	2.	3.		4.		5.		6.		7.	
		Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ	
		Իրավաբա-նական անձ		Իրավաբա-նական անձ		Իրավաբա-նական անձ		Իրավաբա-նական անձ		Իրավաբա-նական անձ	

ԲԱԺԻՆ 3

Տողի համարը	Ազդարարման հաղորդման **դեպքը՝ ըստ օրենքի**	Ընդհանուր թիվը՝ **ըստ դեպքի տեսակի**	Որից		
			Ազդարարման հաղորդումների այլ մարմիններ **վերահասցեագրումների թիվը**	Ազդարարման հաղորդման հիմքով վարույթի **հարուցումը մերժված դեպքերի թիվը**	Ազդարարման հաղորդման հիմքով **հարուցված վարույթների թիվը**
1.	2.	3.	4.	5.	6.

Ազդարարման հաղորդման հիմքով հարուցված վարույթի արդյունքում ընդունված **ակտերի ընդհանուր թիվը**	Որից			
	Պաշտոնատար անձին կարգապահական **պատասխանատվության ենթարկելու դեպքերի թիվը**	Հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու և **իրավասու մարմնին դիմելու դեպքերի թիվը**	Հարուցված վարույթների **կարճման դեպքերի թիվը**	Խախտում **չհայտնաբերելու դեպքերի թիվը**
7.	8.	9.	10.	11.

ԲԱԺԻՆ 4

Տողի համարը	Ազդարարին տրամադրված **պաշտպանության միջոցի տեսակը**	Ընդհանուր թիվը՝ ըստ **պաշտպանության տեսակի**	Պաշտպանության նախաձեռնման հիմքը, որից	
			Մարմնի նախաձեռնությամբ տրամադրված	**Ազդարարի դիմումի հիման վրա տրամադրված**

			պաշտպանության տեսակների թիվը	**պաշտպանության տեսակների թիվը**
1.	2.	3.	4.	5.

Ազդարարին պաշտպանություն տրամադրելու **մերժման դեպքերի ընդհանուր թիվը**	Որից	
	Իրավասու մարմնի մերժման որոշումների թիվը	Դիմումին որևէ այլ հիմքով ընթացք չտալու դեպքերի թիվը
6.	7.	8.

Ազդարարի անձի գաղտնիության պահպանման պարտականության խախտման դեպքերը	Որից		Ազդարարի անձի գաղտնիության պահպանման պարտականության խախտման դեպքում օրենքով նախատեսված **վարույթ հարուցելու միջնորդությունների թիվը**	Ազդարարման հետևանքով ազդարարի նկատմամբ իրականացված **վնասակար գործողությունների ընդհանուր թիվը**
	Իրավասու մարմնի **պատասխանատու անձի մեղքով**	Այլ պատճառներով		
9.	10.	11.	12.	13.

Ազդարարի նկատմամբ իրականացված **վնասակար գործողությունների վերացմանն ուղղված միջոցառումների թիվը**	Որից		
	Ազդարարի իրավունքների պաշտպանությանը կամ խախտված **իրավունքների վերականգնմանն ուղղված միջոցառումների թիվը**	Վնասակար գործողություն կատարած պաշտոնատար անձանց **կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերի թիվը**	Վնասակար գործողություն կատարած պաշտոնատար անձանց **այլ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունների թիվը**
14.	15.	16.	17.

Վիճակագրության վարման կարգի համաձայն՝ իրավասու մարմնի կողմից վարվող վիճակագրությունն ամփոփվում է օրացուցային տարվա կտրվածքով, բայց ոչ ուշ, քան մինչև **հաջորդ տարվա մարտի 1-ը**: Օրացուցային տարվա հաշվման սկիզբ է համարվում հունվարի 1-ը, իսկ ավարտը՝ դեկտեմբերի 31-ը: Իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա **մարտի 10-ն ուղարկել ՄԻՊ-ին**՝ տարեկան ամփոփում կատարելու և հրապարակելու նպատակով: Միևնույն ժամանակ, իրավասու մարմինը պարտավոր է մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը իր պաշտոնական ինտերնետային կայքում (ՏԻՄ-երի պաշտոնական ինտերնետային կայքերի բացակայության դեպքում՝ մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում) տեղադրել վերը նշված Ձևին համապատասխան ամփոփված վիճակագրական տվյալները, ինչպես նաև հաշվետու տարվան նախորդող տարվա վիճակագրական հաշվետվության հետ համեմատական վերլուծությունը:

Չնայած վերոգրյալին, հարկ է նշել, որ ազդարարման համակարգի արդի խնդիրներից է, ի թիվս այլնի, ազդարարման հարցերով վիճակագրության վարելու միասնական կանոնների բացակայությունը, վիճակագրության մեջ ներառվող տվյալների սահմանափակ բնույթը, վիճակագրություն վարողների սահմանափակ շրջանակը: Այս խնդիրները ընդգծվել են նաև ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի շրջանակներում [26] : ՀՀ Հակակոռուպցիոն ազգային ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծի գործողություն 2.21-ով նախատեսվել է՝ զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը: Այս գործողությունից բխող միջոցառումներն են՝ վիճակագրության վարման պարտադիր և միասնական կանոնների ներդրում՝ ներառելով նաև ազդարարների նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցների վերաբերյալ տվյալները, ազդարարման հետ կապված վիճակագրություն վարելու պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնումը, միասնական վիճակագրության հրապարակայնության ապահովում գործող էլեկտրոնային հարթակի միջոցով[27]:

Բ. ՄԻՊ-Ի ԴԵՐԸ[28]՝ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

---

[26] ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ, էջ 45: Հասանելի է՝ https://www.e-draft.am/projects/5986/about

[27] ՀՀ Հակակոռուպցիոն ազգային ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագիծ, էջեր 69-70: Հասանելի է՝ https://www.e-draft.am/projects/5986/about

[28] «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՕ-96-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 13-րդ մասի և 24-րդ հոդվածի 35-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ ԿԿՀ-ն ազդարարման ոլորտում ևս

Ազդարարման ոլորտում վիճակագրության վարելու լիազորությունը տրված է ՄԻՊ-ին: Վերջինս լիազորված է իրականացնել մոնիտորինգ և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևել պետական մարմինների, ՏԻՄ-երի և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը: ՄԻՊ-ը իր տարեկան հաղորդման շրջանակներում պետք է ամփոփի և հրապարակի ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական մարմինների և ՏԻՄ-երի՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա: Հաշվետվությունը և վիճակագրությունն ամփոփվում և հրապարակվում են ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի կայքէջում (www.azdararir.am) և Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) պաշտոնական կայքէջում (www.ombuds.am): Նշված հաշվետվությունը և վիճակագրությունը պետք է առնվազն տեղեկատվություն պարունակի ազդարարների կողմից իրավասու մարմիններ ներկայացվող հաղորդումների (ըստ տեսակների և ձևերի) և ազդարարներին տրամադրվող պաշտպանության վերաբերյալ[29]:

Ազդարարների պաշտպանության հարցում ՄԻՊ-ին համապատասխան լիազորություններ բոլորովին վերջերս է տրվել, մասնավորապես՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-500-Ն ՀՀ սահմանադրական օրենքի ընդունմամբ[30]: ՀՕ-500-Ն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *Մարդու իրավունքների պաշտպանի՝ հաշվետվությունը և վիճակագրությունը www.azdararir.am ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում հրապարակելու լիազորությունը ծագում է միասնական էլեկտրոնային հարթակին Մարդու իրավունքների պաշտպանի հասանելիությունն ապահովելու պահից:* Ըստ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծի հիմնավորման՝ *«Հաշվի առնելով Մարդու*

ունի գործառույթներ և լիազորություններ, մասնավորապես՝ վերջինս ապահովում է իր իրավասության ոլորտին առնչվող յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում ձեռնարկում է միջոցներ, իրականացնում է վիճակագրության վարումը և «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ լիազորություններ: Սակայն, ելնելով այն հանգամանքից, որ վերջինս հանդիսանում է պետական մարմին, և մյուս պետական մարմինների և ՏԻՄ-երի հետ միասին հանդես գալիս է որպես «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի իմաստով **իրավասու մարմին**, որը յուրաքանչյուր տարի ներկայացնում է վիճակագրական տվյալներ, ԿԿՀ-ին՝ որպես առանձին մարմին, անդրադարձ չի կատարվում:

[29] Տե՛ս «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական ՀՕ-1-Ն ՀՀ օրենք, հոդված 30.2, հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172136

[30] 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-500-Ն ՀՀ սահմանադրական օրենքը հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172109

իրավունքների պաշտպանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վերջինիս վերապահված լիազորությունների շրջանակը՝ ազդարարների պաշտպանությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանությանն համակարգի տարր, ևս նպատակահարմար է վերապահել Մարդու իրավունքների պաշտպանին, որը որպես անկախության բավարար երաշխիքներ ունեցող մարմին հնարավորիս արդյունավետ կապահովի ազդարարների պաշտպանությունն ու ազդարարման ոլորտում մյուս լիազորությունների կատարումը»[31]: Հիմնավորումից պարզ է դառնում, որ ՄԻՊ-ին նման լիազորություն տրվել է ոչ թե այն հանգամանքից ելնելով, որ վերջինս հակակոռուպցիոն միասնական (ունիվերսալ) կամ մասնագիտացված կառույց է կամ հակակոռուպցիոն ոլորտում ունի որոշակի մանդատ և պրակտիկա, այլ քանի որ այն սահմանադրաիրավական կարգավիճակ ունեցող մարմին է, և ազդարարների պաշտպանությունը դիտարկվել է ոչ թե կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում, այլ համընդհանուր՝ մարդու իրավունքների պաշտպանության պրիզմայով:

Անդրադառնալով միասնական էլեկտրոնային հարթակին ամբողջական ծավալով ՄԻՊ-ի հասանելիության ապահովմանը, հարկ է նշել, որ դրանք կարող են բացասաբար ազդել միասնական էլեկտրոնային հարթակի գաղտնիության երաշխիքների արդյունավետության և գործնական պահպանման գնահատականի նկատմամբ հանրության վստահության վրա, քանի որ տվյալ պարագայում աճում է թե՝ տեխնիկական, թե՝ մարդկային գործոնով պայմանավորված տվյալների նկատմամբ չարտոնված մուտքի, տվյալների արտահոսքի, տվյալների պատահական բացահայտումների և տվյալների գաղտնիության պահպանման մասին օրենսդրական պահանջների այլ խախտումների ռիսկը:

Հարկ է նաև նշել, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որը ՄԻՊ-ին այս լիազորությունը տրվել է 2022 թվականի դեկտեմբերին ամսին, վերջինիս 2022 թվականի տարեկան զեկույցում[32] ազդարարման համակարգի վերաբերյալ անդրադարձ չկա[33]: Ավելին, ՀՀ կառավարության 06.07.2023 թվականի N 1148-Ն որոշմամբ ներդրված վիճակագրության վարման կարգով նախատեսված ձևով հաշվետվությունները ևս **հասանելի չեն հանրությանը,** քանի որ այդ հաշվետվության ժամանակահատվածը ընգրկում է հաշվետու տարվա հունվարից դեկտեմբեր ամիսները, իսկ հաշվետվությունները ամփոփվում են հաջորդող տարվա մարտի 1-ին և հրապարկվում են մարտի 31-ին:

---

[31] Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական ՀՀ օրենքի փոփոխությունների և լրացումների նախագծի հիմնավորումը, հասանելի է՝ https://www.e-draft.am/projects/4470/about

[32] ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2022 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը հասանելի է՝ https://www.ombuds.am/images/files/8e210585a756e539423e2b99c61b7493.pdf

[33] Ենթադրվում է որ այդ ՄԻՊ-ի կողմից ազդարարման ոլորտին, այդ թվում՝ վիճակագրությանը, անդրադարձ կլինի 2023 թվականի տարեկան զեկույցի շրջանակներում, որը հրապարկվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը:

Գ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՎՈՂ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1) *Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ, www.azdararir.am*

Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի (այսուհետ նաև՝ միասնական էլեկտրոնային հարթակ) միջոցով ազդարարը կարող է անանուն կամ տվյալները ներկայացնելու եղանակով հաղորդել տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին: Միասնական էլեկտրոնային հարթակի ինտերնետային հասցեն է՝ https://azdararir.am/am/, որը վարում է Կառավարության լիազոր մարմինը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը: Սակայն հարթակով ստացված ազդարարումներին դեռևս միայն հասանելիություն ունի Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը[34]: Նախատեսված է ապահովել նաև ՄԻՊ-ի հասանելիությունը՝ էլեկտրոնային հարթակում վիճակագրության հաշվետվությունները հրապարակելու նպատակով:

Ինչպես արդեն նշվել է վերևում, ՄԻՊ-ը՝ պետական մարմինների և ՏԻՄ-երի՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա մշակված հաշվետվությունը և վիճակագրությունն ամփոփում և հրապարակում են ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի կայքէջում (www.azdararir.am) և ՄԻՊ պաշտոնական կայքէջում (www.ombuds.am): Նշված հաշվետվությունը և վիճակագրությունը պետք է առնվազն տեղեկատվություն պարունակի ազդարարների կողմից իրավասու մարմիններ ներկայացվող հաղորդումների (ըստ տեսակների և ձևերի) և ազդարարներին տրամադրվող պաշտպանության վերաբերյալ: Ներկայում ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի կայքէջի «Վիճակագրություն»[35] բաժինը ներկայացնում է հետևյալ տվյալները.

- ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով իրականացված ազդարարումների քանակն ըստ ամիսների,

---

[34] Ներկայում քննարկվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (ԿԿՀ) հասանելիության հնարավորության տրամադրումը՝ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին ազդարարումները ստանալու դեպքում:

[35] Էլեկտրոնային միասնական հարթակի վիճակագրությունը հասանելի է՝ https://azdararir.am/am/statistics

- օպերատիվ-հետախուզական գործողություններով ստուգված ազդարարումների տոկոսային հարաբերակցությունն ազդարարումների ընդհանուր քանակի հետ,
- հարուցված քրեական գործերի քանակի տոկոսային հարաբերակցությունն օպերատիվ-հետախուզական գործողություններով ստուգված ազդարարումների ընդհանուր քանակի հետ։

Որոշակի տեղեկություններ ներկայացված են նաև հարթակի «Բացահայտված հանցագործություններ» բաժնում[36], որտեղ նշված են էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով 2019-2022թթ. ընթացքում՝

- ստացված ազդարարումների թիվը,
- անանուն և տվյալները բացահայտված եղանակով ստացված ազդարարումների թիվը,
- հարուցված, կարճված և մերժված վարույթների թիվը,
- հարուցված վարույթներն՝ ըստ քրեական օրենսգրքի հոդվածների,
- հարուցված վարույթների ընթացիկ կարգավիճակը։

Հիշյալ վիճակագրական տվյալները ընդհանուր բնույթի են, հաշվարկված են ձեռքով կամ համակարգչային ծրագրով, իսկ ապա՝ մուտքագրված են հարթակ։ Այսինքն, հարթակը ինքնաշխատ եղանակով չի գեներացրել այդ տվյալները։ Հարթակում բացակայում է վիճակագրական տվյալները ինքնաշխատ կերպով գեներացնելու գործիքները (լուծումները)։ Բացի այդ վիճակագրական տվյալները ներկայացված են զուտ տեքստային տարբերակով, մի շարքի վրա, առանց տարանջատման, որը դժվարացնում է ընթերցումը և user-friendly չէ։

Ավելին, ՀՀ կառավարության 06.07.2023 թվականի N 1148-Ն որոշմամբ ներդրված վիճակագրության վարման կարգով վիճակագրության ինքնաշխատ եղանակով հաշվառման (տվյալների գեներացման) գործիքներ նույնպես նախատեսված չեն։ Այս նոր կարգով նախատեսված ձևով և բովանդակությամբ հաշվետվությունները պետք է լրացվեն, **տարեկան կտրվածքով** ամփոփվեն և զուտ հրապարակվեն միասնական էլեկտրոնային հարթակում։ Արդյունքում, հանրությունը ստիպված է սպասել շուրջ 15 ամիս (հաշվետու ժամանակացույցը ընդգրկում է հունվարից դեկտեմբեր ամիսները, իսկ հաշվետվությունները ամփոփվում են հաջորդող տարվա մարտի 1-ին և հրապարկվում են մարտի 31-ին) վիճակագրությանը ծանոթանալու նպատակով։

[36] Էլեկտրոնային միասնական հարթակի «Բացահայտված հանցագործություններ» բաժինը հասանելի է՝ https://azdararir.am/am/cases

2) *Աշխատանքային իրավունքների առցանց ազդարարման հարթակ, https://employeeprotect.am/*

Աշխատանքային ոլորտում ծագած խնդիրների կամ առերևույթ իրավախախտումների վերաբերյալ ազդարարումները ներկայացվում են աշխատանքային իրավունքների առցանց ազդարարման հարթակին՝ https://employeeprotect.am/: Աշխատողների իրավունքների պաշտպանության EmployeeProtect.am առցանց հարթակը գործարկվում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) կողմից: Այս հարթակում ներառված է վիճակագրության վարման գործիք, որը ինչպես արդեն նշվեց, վերաբերում է միայն աշխատանքային իրավունքների խախտման դեպքերին[37]:

Այս հարթակում ներառված է վիճակագրության վարման գործիք, որը վերաբերում է հետևյալ երեք ենթաբաժինների՝

1) ներկայացված հայտեր,
2) տրամադրված իրավաբանական խորհրդատվություն և պարզաբանումներ,
3) իրականացված բարեփոխումներ:

«Ներկայացված հայտեր» ենթաբաժնում վիճակագրությունը ներկայացված է ըստ հետևյալ կատեգորիաների՝

- ստացված ազդարարումների քանակը,
- ըստ ազդարարման եղանակների՝ անանուն և տվյալները ներկայացնելու միջոցով, ինչպես նաև՝ երկուսը միասին,
- սուբյեկտը, որի դեմ ուղղվել է հայտը,
- սուբյեկտի կազմակերպաիրավական ձևը, որի դեմ ուղղվել է հայտը,
- տարածաշրջանը՝ ըստ Երևանի և ՀՀ մարզերի,
- հայտ ներկայացնող սուբյեկտի կարգավիճակը (իր իրավունքն է խախտվել թե վերջինս երրորդ անձ է),
- խախտված աշխատանքային իրավունքը (թե աշխատանքային ինչ իրավունք է խախտվել),
- հայտի կարգավիճակը,
- վիճակագրությունն ընդգրկող ժամանակահատվածը:

---

[37] EmployeeProtect.am Աշխատանքային իրավունքների առցանց ազդարարման հարթակի վիճակագրությունը հասանելի է՝ https://employeeprotect.am/am/report/statistics

Հարթակում՝ որպես վիճակագրության և գործունեության արդյունքների ներկայացման հավելյալ գործիք, ներկայացված է նաև տրամադրված իրավաբանական խորհրդատվության և պարզաբանման, ինչպես նաև իրականացված բարեփոխումների վիճակագրական տվյալները։

Տրամադրված իրավաբանական խորհրդատվության և պարզաբանման վիճակագրությունը ներկայացված է ըստ հետևյալ կատեգորիաների՝

- աշխատանքային իրավունքի խախտման բնույթը,
- տարածաշրջանը՝ ըստ Երևանի և ՀՀ մարզերի,
- հայտի (խորհրդատվության և պարզաբանման տրամադրման) կարգավիճակը,
- վիճակագրությունն ընդգրկող ժամանակահատվածը։

Իրականացված բարեփոխումների վիճակագրությունը ներկայացված է ըստ հետևյալ կատեգորիաների՝

- բարեփոխումն առաջարկած սուբյեկտը,
- տարածաշրջանը՝ ըստ Երևանի և ՀՀ մարզերի,
- հայտի (բարեփոխման իրականացման) կարգավիճակը,
- վիճակագրությունն ընդգրկող ժամանակահատվածը։

Բոլոր դեպքերում, EmployeeProtect.am հարթակի **երեք ենթաբաժիններով** առցանց ներկայացրած հայտերի վիճակագրական տվյալները **գեներացվում են ինքնաշխատ կերպով:**

3) *Բիզնես ոլորտի առցանց ազդարարման հարթակ.* https://bizprotect.am/

Բիզնես ոլորտում, ներառյալ՝ հարկային, մաքսային, լիցենզիաներ և թույլտվություններ, պետական գնումներ և այլն, հանդիպած ենթադրյալ կոռուպցիոն դեպքերի և այլ հարակից խնդիրների մասին անանուն կամ տվյալները ներկայացնելու եղանակով ազդարարումներ են ներկայացվում բիզնես ոլորտի առցանց ազդարարման հարթակին՝ https://bizprotect.am/: Բիզպաշտպան բիզնես ոլորտի առցանց ազդարարման հարթակը գործարկվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի (ԻՀԱ) կողմից։

Այս հարթակում ներառված է վիճակագրության վարման գործիք, որը ինչպես արդեն նշվեց, վերաբերում է հարթակի միջոցով ստացված հայտերին (ազդարարումներին) [38] : Այստեղ վիճակագրական տվյալները ներկայացված ըստ հետևյալ կատեգորիաների՝

- ստացված հայտերի (ազդարարումների) քանակը,
- հայտերի քանակը ըստ ազդարարման եղանակների՝ անանուն և տվյալները ներկայացնելու միջոցով, ինչպես նաև՝ երկուսը միասին,
- ձեռնարկված քայլերի թիվը (քանիսին է ներկայացվել ըստ ենթակայության, Ինչ քայլեր են ձեռնարկվել),
- ընթացքն ապահովված և մերժված հայտերի թիվը,
- արդյունքները, ըստ տարբեր կատեգորիաների (հօգուտ ազդարարի լուծված հայտերի թիվը, ազդարարի ներկայացած խնդրի վերաբերյալ տրամադրված իրավական խորհրդատվության և պարզաբանման թիվը),
- հայտի կարգավիճակը,
- այն մարմինները, որի դեմ ներկայացված են հայտերը՝ ըստ քանակական ցուցանիշների,
- վիճակագրությունն ընդգրկող ժամանակահատվածը:

Bizprotect.am հարթակում առցանց ներկայացրած հայտերի վիճակագրական տվյալները **գեներացվում են ինքնաշխատ կերպով**: Բացի այդ, ինքնաշխատ համակարգից գեներացված վիճակագրական տվյալների հիման վրա **մշակվում և հրապարակվում են հանրամատչելի ինֆոգրաֆիկաներ**՝ հանրության շրջանում ազդարարման համակարգը խթանելու և ազդարարելու մշակույթը զարգացնելու նպատակով[39]:

4) Haytnir.am ազդարարման առցանց հարթակ, Haytnir.am

Haytnir.am ազդարարման առցանց հարթակի միջոցով ազդարարը կարող է անանուն կամ տվյալները ներկայացնելու եղանակով հաղորդել տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին: Ըստ էության, այս հարթակով կարող են ներկայացվել նույնաբնույթ ազդարարումներ, ինչպես որ միասնական

[38] Բիզպրոտեկտ Բիզնես ոլորտի առցանց ազդարարման հարթակի վիճակագրությունը հասանելի է՝ https://bizprotect.am/am/statistic

[39] Հանրամատչելի ինֆոգրաֆիկաների օրինակներ հասանելի են՝ https://bizprotect.am/am/statistic/show/28

էլեկտրոնային հարթակի՝ https://azdararir.am/am/-ի միջոցով: Haytnir.am ազդարարման առցանց հարթակը գործարկվում է ԻՀԱ-ի կողմից:

Այս հարթակում ներառված է վիճակագրության վարման գործիք, որը վերաբերում է հետևյալ երեք ենթաբաժինների՝

1) ներկայացված հայտեր,
2) Տրամադրված իրավաբանական խորհրդատվություն և պարզաբանում,
3) Իրականացված բարեփոխումներ:

«Ներկայացված հայտեր» ենթաբաժնում հարթակը ցուցադրում է հայտերի վիճակագրությունը՝ ըստ ներքոշարադրյալ զտիչների և տարբերակների, որոնք պետք է փոխկապակցված լինեն ազդարարի կողմից համապատասխան տարբերակի ընտրության հետ, բացառությամբ՝ կարգավիճակին վերաբերող «Կարգավիճակը» զտիչի, որի դեպքում փոխկապակցվածությունը պետք է լինի յուրաքանչյուր հայտի կապակցությամբ «Հայտնիր.am» թիմի կողմից ադմինիստատորի բովանդակության կառավարման համակարգում հնարավոր կարգավիճակների ցանկից ընտրված տարբերակի հետ: Ցուցիչներն են՝

- ներկայացման ձևը, ներառում է անանուն և անձը բացահայտած եղանակը, կամ՝ երկուս միասին,
- հասցեատերը, ընտրելու հնարավորությամբ՝ պետական մարմին կամ կազմակերպություն կամ ոչ պետական կազմակերպություն,
- հայտի հասցեատիրոջ կազմակերպաիրավական ձևը (ներառված են ՀՀ-ում գործող բոլոր պետական կառավարման մարմինները, ՏԻՄ-երի և մարզպետարանների ընտրության հնարավորություն, հանրային կազմակերպությունների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կազմակերպությունների ընտրության հնարավորություն, ինչպես նաև «ԱՅԼ» կատեգորիա, որտեղ հնարավոր է նշել հասցեատիրոջը),
- տարածաշրջանը՝ ըստ Երևանի և ՀՀ մարզերի,
- կոռուպցիոն դեպքը, խախտումը կամ այլ իրավախախտումը (ընդգրկուն ցանցից ընտրելու հնարավորությամբ),
- հայտի կարգավիճակը՝ հետևյալ կատեգորիաների ընտրության հնարավորությամբ՝
    - ընթացք տրված հայտերի քանակ,
    - «Հայտնիր.am» փորձագիտական թիմի կողմից ակնհայտ անհիմն լինելու, ոչ վերաբերելի լինելու, ոչ բավարար տեղեկատվության և համանման հիմքերով վերադարձված հայտերի քանակ,

- «Հայտնիր.am» փորձագիտական թիմի կողմից գրավոր խորհրդատվության տրամադրմամբ ավարտված հայտերի քանակ,
- իրավասու վարչական մարմիններին ներկայացված հայտերի քանակ,
- իրավասու վարչական մարմնի կողմից գրավոր խորհրդատվության/պարզաբանման տրամադրմամբ ավարտված հայտերի քանակ,
- իրավասու վարչական մարմնի կողմից անհիմն լինելու հիմքով՝ գրավոր պատճառաբանությամբ վերադարձված հայտերի քանակ,
- իրավասու վարչական մարմնի կողմից հարուցված և չավարտված վարչական վարույթում գտնվող հայտերի քանակ,
- իրավասու վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի արդյունքում բավարարված հայտերի քանակ,
- իրավասու վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի արդյունքում չբավարարված հայտերի քանակ,
- վարչական մարմնի կողմից կարճված հայտերի քանակ,
- իրավապահ մարմիններին ներկայացված հայտերի քանակ,
- իրավապահ մարմնի կողմից առանց օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացման քրեական գործի հարուցումը մերժած հայտերի քանակ,
- իրավապահ մարմնի կողմից օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացմամբ քրեական գործի հարուցումը մերժած հայտերի քանակ,
- իրավապահ մարմնի կողմից քրեական գործ հարուցված և չավարտված՝ քրեական վարույթի նախաքննության փուլում գտնվող հայտերի քանակ,
- իրավապահ մարմնի կողմից հարուցված քրեական գործի վարույթը՝ արդարացնող հիմքով կարճված հայտերի քանակ,
- իրավապահ մարմնի կողմից հարուցված քրեական գործի վարույթը՝ ոչ արդարացնող հիմքով կարճված հայտերի քանակ,
- իրավապահ մարմնի կողմից հարուցված քրեական գործի վարույթը դատարան ուղարկված և դատաքննության փուլում գտնվող հայտերի քանակ,
- դատարանի կողմից քրեական վարույթի արդյունքում բավարարված հայտերի քանակ,
- դատարանի կողմից քրեական վարույթի արդյունքում չբավարարված հայտերի քանակ,
- դատարանի կողմից քրեական վարույթի արդյունքում՝ արդարացնող հիմքով կարճված հայտերի քանակ,

    - դատարանի կողմից քրեական վարույթի արդյունքում՝ ոչ արդարացնող հիմքով կարճված հայտերի քանակ (պատկերում է այն հայտերի թիվը,
    - հայտատուի կողմից հրաժարված կամ այլ հիմքերով Հայտնիր.am փորձագիտական թիմի կողմից ուսումնասիրության դադարեցմամբ ավարտված հայտերի քանակ,
- սուբյեկտը (հայտ ներկայացնողը՝ հայտատուն է, թե 3-րդ անձ),
- վիճակագրությունն ընդգրկող ժամանակահատվածը։

Հարթակում՝ որպես վիճակագրության և գործունեության արդյունքների ներկայացման հավելյալ գործիք, ներկայացված է նաև տրամադրված իրավաբանական խորհրդատվության և պարզաբանման, ինչպես նաև իրականացված բարեփոխումների վիճակագրական տվյալները։

«Տրամադրված իրավաբանական խորհրդատվության և պարզաբանման վիճակագրություն» ենթաբաժնում հարթակը ցուցադրում է տրամադրված խորհրդատվությունների/պարզաբանումների վիճակագրությունը՝ ըստ ներքոշարադրյալ զտիչների և տարբերակների, որոնք պետք է փոխկապակցված լինեն ազդարարի կողմից համապատասխան տարբերակի ընտրության հետ, բացառությամբ՝ կարգավիճակին վերաբերող «Կարգավիճակը» զտիչի, որի դեպքում փոխկապակցվածությունը պետք է լինի յուրաքանչյուր հայտի կապակցությամբ «Հայտնիր.am» թիմի կողմից ադմինիստատորի բովանդակության կառավարման համակարգում հնարավոր կարգավիճակների ցանկից ընտրված տարբերակի հետ։ Ցուցիչներն են՝

- տարածաշրջանը՝ ըստ Երևանի և ՀՀ մարզերի,
- կոռուպցիոն դեպքը, խախտումը կամ այլ իրավախախտումը (ընդգրկուն ցանցից ընտրելու հնարավորությամբ),
- հայտի կարգավիճակը՝ հետևյալ կատեգորիաների ընտրության հնարավորությամբ՝
    - «Հայտնիր.am» հարթակի թիմի կողմից տրամադրված խորհրդատվությունների քանակը,
    - իրավասու վարչական մարմնի կողմից տրամադրված գրավոր խորհրդատվությունների/պարզաբանումների քանակը,
- վիճակագրությունն ընդգրկող ժամանակահատվածը։

«Տրամադրված իրավաբանական խորհրդատվության և պարզաբանման վիճակագրություն» ենթաբաժնում հարթակը ցուցադրում է իրականացված բարեփոխումների վիճակագրությունը՝ ըստ ներքոշարադրյալ զտիչների և տարբերակների, որոնք փոխկապակցված լինեն ազդարարի կողմից համապատասխան տարբերակի ընտրության հետ, բացառությամբ՝ կարգավիճակին վերաբերող

«կարգավիճակը» զտիչի, որի դեպքում փոխկապակցվածությունը պետք է լինի յուրաքանչյուր հայտի կապակցությամբ «Հայտնիր.am» թիմի կողմից ադմինիստատորի բովանդակության կառավարման համակարգում հնարավոր կարգավիճակների ցանկից ընտրված տարբերակի հետ: Ցուցիչներն են՝

- կոռուպցիոն դեպքը, խախտումը կամ այլ իրավախախտումը (ընդգրկուն ցանցից ընտրելու հնարավորությամբ),
- կարգավիճակը՝ հետևյալ կատեգորիաների ընտրության հնարավորությամբ՝
    - թերի իրավակարգավորումների բարեփոխումների քանակը,
    - հակասող իրավակարգավորումների առաջնահերթության բարեփոխումների քանակը,
    - իրավակարգավորումների ոչ միատեսակ կիրառության բարեփոխումների քանակը,
- վիճակագրությունն ընդգրկող ժամանակահատվածը:

Բոլոր դեպքերում, Haytnir.am հարթակի **երեք ենթաբաժիններով** ներկայացված առցանց ներկայացրած հայտերի վիճակագրական տվյալները **գեներացվում են ինքնաշխատ կերպով**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ա. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

1. Ազդարարների պաշտպանության ազգային մեխանիզմների արդյունավետության գնահատման համար կարևոր դեր ունի ազդարարումների (հաղորդումների), ազդարարներին տրամադրված պաշտպանության ձևերի վերաբերյալ վիճակագրության հավաքագրումը:
2. Ազդարարման հետ կապված վարվում է մանրամասն վիճակագրություն, որը այլ տեղեկությունների հետ միասին պարբերաբար հավաքվում, վերլուծվում և օգտագործվում են որպես հակակոռուպցիոն քաղաքականության բարեփոխման հիմք:
3. Ազդարարման վիճակագրության հետ կապված տեղեկությունները ցանկալի է հավաքագրել և վարել տեսակավորված (խմբավորված) և համախմբված:
4. Ազդարարման հետ կապված վիճակագրությունը ցանկալի է ընդգրկի ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային հատվածի աշխատակիցների կողմից ներկայացված ազդարարումները և դրանից բխող մյուս տվյալները:
5. Ընդհանուր առմամբ, ազդարարման վիճակագրություն վարելու համար խորհուրդ է տրվում ունենալ վիճակագրություն՝ ըստ հետևյալ տվյալների.
    1) իրավասու մարմինների կողմից ստացված հաղորդումների քանակը.
    2) ազդարարում ներկայացրած անձանց թիվը, ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց դասակարգումների.
    3) ազդարարի կարգավիճակ ստացած անձանց թիվը.
    4) ներկայացված հաղորդումների քանակը՝ ըստ տեսակների (ներքին, արտաքին, հանրությանը).
    5) ներկայացված հաղորդումների քանակը՝ ըստ եղանակների (հեռախոս, թեժ գիծ, էլեկտրոնային միասնական հարթակ, էլեկտրոնային նամակ, բանավոր հաղորդում).
    6) ներկայացված հաղորդումների քանակը՝ ըստ գաղտնիության մեխանիզմների (անանուն կամ բացահայտ՝ անձնական տվյալները տրամադրելու միջոցով),
    7) պաշտպանության միջոցներ տրամադրելու համար ներկայացված դիմումների քանակը, այդ թվում նաև՝ թե որ փուլում են ներկայացվել այդ դիմումները (օրինակ՝ նախաքննության փուլում, դատական քննության փուլում),
    8) ազդարարներին տրամադրված պաշտպանության միջոցների քանակը և տեսակները, այդ թվում նաև՝ թե որ փուլում են տրվել այդ միջոցները (օրինակ՝ նախաքննության փուլում, դատական քննության փուլում).

9) ազդարարման դեպքերի բնույթը և քանակը (օրինակ՝ կոռուպցիոն դեպք, վարքագծի կանոնների խախտում)՝ տեսակավորված (խմբավորված).
10) ստացված հաղորդումների արդյունքում հարուցված քրեական կամ վարչական վարույթների և դատավարությունների քանակը, դրանց արդյունքները.
11) ստացված հաղորդումների կարգավիճակը (օրինակ՝ հարուցված, կասեցված, կարճված վարչական և քրեական վարույթների քանակը).
12) գնահատված ֆինանսական վնասը և վարույթների ու դատավարությունների արդյունքում այդ գնահատված վնասների հետևանքով վերականգնված գումարները, եթե այդպիսիք պարզվել են.
13) ազդարարման վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունների և/կամ պարզաբանումների քանակը,
14) ազդարարման վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունների և/կամ պարզաբանումների տրամադրման եղանակները (հեռախոս, թեժ գիծ, էլեկտրոնային միասնական հարթակ, էլեկտրոնային նամակ, գրավոր, բանավոր).
15) ազդարարման վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունների և/կամ պարզաբանումների բնույթը (օրինակ՝ խորհրդատվություն ազդարարում ներկայացնելու և հաղորդում կազմելու կարգի մասին),
16) ազդարարման վարույթների ընթացքում միջազգային համագործակցության քանակը և բնույթը,
17) նախորդ տարիներում ստացված այն ազդարարումների թիվը, որոնց ուղղությամբ միջոցներ են ձեռնարկել ընթացիկ տարում,
18) համեմատական վիճակագրական տվյալներ մյուս տարիների հետ։

6. Ազդարարման հետ կապված վիճակագրությունը վարվում է հիմնականում հետևյալ երկու մարմիններից կողմից՝ (ա) ազդարարման ոլորտում պատասխանատու իրավասու կենտրոնական մարմինը, (բ) կանխարգելման գործառույթներ իրականացնող ազգային մարմինը։

Բ. ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ազդարարման համակարգի արդի խնդիրներից է, ի թիվս այլնի, ազդարարման հարցերով վիճակագրության վարելու միասնական կանոնների բացակայությունը, վիճակագրության մեջ ներառվող տվյալների սահմանափակ բնույթը, վիճակագրություն վարողների սահմանափակ շրջանակը։ Ներկայում իրավասու մարմինն ինքնուրույն է սահմանում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման,

ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը՝ որպես նվազագույն պահանջներ դիտարկելով ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշման պահանջները։

2. ՀՀ կառավարությունը 06.07.2023 թվականին N 1148-Ն որոշմամբ կատարել է լրացումներ և փոփոխություններ ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական մարմիններում և ՏԻՄ-երում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման մեջ, որով նախատեսել **ազդարարման ոլորտի վիճակագրության վարման կարգ։**
3. Վիճակագրության վարման կարգի համաձայն՝ պետական մարմինները և ՏԻՄ-երը վարում են օրացուցային տարվա կտրվածքով վիճակագրություն, որն ամփոփվում է ոչ ուշ, քան մինչև **հաջորդ տարվա մարտի 1-ը**։ Իրավասու այս մարմինները պարտավոր են ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա **մարտի 10-ն ուղարկել հաշվետվությունը ուղարկել ՄԻՊ-ին։** ՄԻՊ-ը ստացված հաշվետվությունը **ամփոփում է և հրապարակում է մինչև մարտի 31-ը։**
4. Հաշվետու տարվան հաջորդող **ապրիլի 1-ը** իրավասու մարմինները իրենց պաշտոնական ինտերնետային կայքում (ՏԻՄ-երի պաշտոնական ինտերնետային կայքերի բացակայության դեպքում՝ մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում) **տեղադրում են** վիճակագրության վարման կարգով սահմանված հաշվետվության Չնին համապատասխան ամփոփված **վիճակագրական տվյալները,** ինչպես նաև հաշվետու տարվան նախորդող տարվա **վիճակագրական հաշվետվության հետ համեմատական վերլուծությունը**։
5. ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշմամբ նախատեսված չէ մասնավոր ոլորտի արտաքին ազդարարման վիճակագրության վարման ընթացակարգ։
6. Հայաստանում գործարկվում է ազդարարման չորս հարթակն, որոնցից երկուսը գործարկվում են պետական մարմինների կողմից, մյուս երկուսը՝ ԻՀԱ-ի կողմից։ Այդ հարթակներն են՝
    1) Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ, www.azdararir.am։ Լիազոր մարմինը՝ ՀՀ արդարադատության մարմինն է, իրավասու մարմինը՝ ՀՀ գլխավորը դատախազությունը։
    2) Աշխատանքային իրավունքների առցանց ազդարարման հարթակ, https://employeeprotect.am/։ Իրավասու մարմինը՝ ԱԱՏՄ-ն է։

3) Բիզնես ոլորտի առցանց ազդարարման հարթակ, https://bizprotect.am/: Գործարկվում է ԻՀԱ-ի կողմից:
4) Haytnir.am ազդարարման առցանց հարթակ, Haytnir.am: Գործարկվում է ԻՀԱ-ի կողմից:

7. Հարթակներից առաջինը՝ www.azdararir.am-ը, հրապարակում է վիճակագրական տվյալներ: Սակայն, այդ **վիճակագրական տվյալները ընդհանուր բնույթի են, հաշվարկված են ձեռքով կամ համակարգչային ծրագրով, իսկ ապա՝ մուտքագրված են հարթակ:** Այսինքն, հարթակը **ինքնաշխատ եղանակով չի գեներացնում այդ տվյալները**: Հարթակում բացակայում է վիճակագրական տվյալները ինքնաշխատ կերպով գեներացնելու գործիքները (լուծումները): Այստեղ վիճակագրական տվյալների կատեգորիաները սահմանափակ են և դրանք ներկայացված են զուտ տեքստային տարբերակով, մի շարքի վրա, առանց տարանջատման, որը դժվարացնում է ընթերցումը և user-friendly չէ: Իսկ վիճակագրության վարման նոր կարգով այս հարթակում տեղադրվելու են **տարեկան կտրվածքով մշակված հաշվետվություններ,** որոնք նմանվելու են պետական մարմինների գործունեությունը **պատմող ստանդարտ հաշվետվությունների:**
8. Հարթակներից երկրորդը՝ https://employeeprotect.am/-ը, երեք ենթաբաժիններով *((1) ներկայացված հայտեր, (2) Տրամադրված իրավաբանական խորհրդատվություն և պարզաբանում, (3) Իրականացված բարեփոխումներ)* գեներացնում է առցանց ներկայացրած հայտերի վիճակագրական տվյալները **ինքնաշխատ կերպով**: Այստեղ վիճակագրական տվյալների կատեգորիաները **ընդգրկուն են**:
9. Հարթակներից երրորդը՝ https://bizprotect.am/-ը, առցանց ներկայացրած հայտերի վիճակագրական տվյալները **գեներացնում է ինքնաշխատ կերպով**: Բացի այդ, ինքնաշխատ համակարգից գեներացված վիճակագրական տվյալների հիման վրա մշակվում և **հրապարակվում են հանրամատչելի ինֆոգրաֆիկաներ՝** հանրության շրջանում ազդարարման համակարգը խթանելու և **ազդարարելու մշակույթը զարգացնելու նպատակով**:
10. Հարթակներից չորրորդը՝ Haytnir.am-ը, երեք ենթաբաժիններով *((1) ներկայացված հայտեր, (2) Տրամադրված իրավաբանական խորհրդատվություն և պարզաբանում, (3) Իրականացված բարեփոխումներ)* գեներացնում է առցանց ներկայացրած հայտերի վիճակագրական տվյալները ինքնաշխատ կերպով: Այստեղ վիճակագրական տվյալների կատեգորիաները **բավականին ընդգրկուն են**:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով ազդարարման ոլորտում վարվող վիճակագրության վերաբերյալ մի կողմից, միջազգային ստանդարտների և առաջավոր, մասնավորապես՝ ԵՄ և Արևելյան Գործընկերության երկրների փորձը, մյուս կողմից, ներպետական օրենսդրության և պրակտիկայի վերլուծությունը՝ առաջարկվում է ՀՀ-ում կատարելագործել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրության համակարգը ըստ ներքոշարադրված առաջարկությունների։

Ա. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրության վարումը իրականացնել ազդարարման ոլորտում պատասխանատու իրավասու կենտրոնական մարմնի միջոցով։ Մարմնի վերաբերյալ առաջարկությունները առավել մանրամասն ներկայացված է «Ազդարարման համակարգի հայկական մոդելի տեսլականը. Ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերի հստակեցում և կենտրոնական մարմնի ձևավորում» փորձագիտական վերլուծության շրջանակներում։
2. Ներդնել ազդարարման տեսակների վիճակագրության վարման միասնական համակարգ, որը պարտադիր կլինի «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավասու մարմիններին համար։ Նախատեսել ներքին և արտաքին ազդարարումների ներկայացման հնարավորություն ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով։ Այս մասով առաջարկությունները ներկայացված են «Ազդարարման տեսակների կատարելագործում» փորձագիտական վերլուծության շրջանակներում։
3. ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշմամբ նախատեսել ընթացակարգ և կարգավորում այն դեպքերի համար, երբ ազդարարումը ներկայացված է ոչ թե ազդարարման հարցերով պատասխանատուին, այլ՝ ազդարարի անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի։
4. ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշմամբ նախատեսել մասնավոր ոլորտի արտաքին ազդարարման վիճակագրության վարման ընթացակարգ։

5. Ներդնել ազդարարման հետ կապված վիճակագրության վարման պարտադիր և միասնական կանոններ՝ ներառելով ընդլայնված վիճակագրական տվյալներ որոնք ներկայացված են ստորև «Բ» և «Գ» կետերի ներքո։
6. Ազդարարման վիճակագրության հետ կապված տեղեկությունները հավաքագրել և վարել տեսակավորված (խմբավորված) և համախմբված։
7. Ազդարարման հետ կապված վիճակագրության շրջանակներում հանրային հատվածի աշխատակիցների կողմից ներկայացված ազդարարումների քանակը բոլոր այն դեպքերում, երբ այդ տեղեկատվությունը հասանելի է իրավասու մարմնին։
8. Վիճակագրությունը վարել երկու բաժնով.
    a. Ստացված ազդարարումներ,
    b. Ազդարարման վերաբերյալ տրամադրված խորհրդատվություն և/կամ պարզաբանումներ։
9. Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում և ազդարարման ոլորտում պատասխանատու իրավասու կենտրոնական մարմնի կայքէջում հրապարակել վիճակագրությունը՝ ըստ վերը առաջարկված երկու բաժինների։ Երկու բաժիններում ներդնել առցանց ներկայացրած ազդարարումների վիճակագրական տվյալների գեներացման ինքնաշխատ գործիքներ՝ ցուցադրելով օգտագործողի կողմից նախընտրած ժամանակահատվածի վիճակագրական տվյալները։

Բ. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ «ՍՏԱՑՎԱԾ ԱԶԴԱՐԱՐՈՒՄՆԵՐ» ԲԱԺՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

10. Այս բաժնի վիճակագրության վարման նպատակով ներկայացվող տվյալների շրջանակներում ներառել իրավասու մարմինների ազդարարման պատասխանատուների կողմից ստացված հաղորդումների ամփոփումը և հրապարակումը՝ ըստ հետևյալ տվյալների.
    1) ազդարարի կարգավիճակ ստացած անձանց թիվը.
    2) հարթակով ներկայացված ազդարարումների թիվը՝ ըստ հետևյալ տեսակների. ներքին և արտաքին, վերջինը ընդգրկում է արտաքին ազդարարումը ինչպես հանրային, այնպես էլ՝ մասնավոր ոլորտներում,
    3) ներկայացված ազդարարումների քանակը՝ ըստ գաղտնիության մեխանիզմների (անանուն կամ բացահայտ՝ անձնական տվյալները տրամադրելու միջոցով).
    4) պաշտպանություն տրամադրելու համար ներկայացված դիմումների ընդհանուր թիվը, որից հետո նոր սահմանել 03.2018 թվականի N 272-Ն որոշման

N 3 հավելվածի Բաժին 4-ում նախատեսված պաշտպանություն տրամադրելու մերժման դեպքերի ընդհանուր թիվը և դրա հետ փոխկապակցված մյուս տվյալները.

5) ազդարարներին տրամադրված պաշտպանության միջոցների թիվը՝ ըստ փուլերի, մասնավորապես՝ թե որ փուլում են տրվել այդ միջոցները (օրինակ՝ նախաքննության փուլում, դատական քննության փուլում) և յուրաքանչյուր փուլում տրամադրված միջոցների թիվը.
6) ստացված ազդարարումների արդյունքում հարուցված քրեական և վարչական վարույթների թիվը (նախատեսել ոչ թե ընդհանուր վարույթների թիվ, այլ խմբավորված՝ ըստ քրեականի և վարչականի),
7) ստացված ազդարարումների կարգավիճակը ըստ վարույթների (օրինակ՝ հարուցված, կասեցված, կարճված վարչական վարույթների քանակը, օրինակ՝ հարուցված, կասեցված, կարճված քրեական վարույթների քանակը).
8) ազդարարման հետևանքով դատարանում քննվող գործերի թիվը.
9) գնահատված ֆինանսական վնասը և վարույթների ու դատավարությունների արդյունքում այդ գնահատված վնասների հետևանքով վերականգնված գումարները, եթե այդպիսիք պարզվել են.
10) տարածաշրջանը՝ ըստ Երևանի և ՀՀ մարզերի,
11) մարմինը (այդ թվում՝ պետական մարմին, ՏԻՄ, պետական ոչ առևտրային կազմակերպություն, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, պետական կազմակերպություն, հանրային կազմակերպություն), որի ներկայացուցչի (հանրային ծառայողի) դեմ կամ նրա մասնակցությամբ դեպքի վերաբերյալ ներկայացվել է ազդարարումը,
12) ազդարարման վարույթների ընթացքում միջազգային համագործակցության քանակը և բնույթը,
13) նախորդ տարիներում ստացված այն ազդարարումների թիվը, որոնց ուղղությամբ միջոցներ են ձեռնարկել ընթացիկ տարում,
14) վիճակագրությունն ընդգրկող ժամանակահատվածը։

Գ. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ «ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ և/ԿԱՄ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» ԲԱԺՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

11. Այս բաժնի վիճակագրության վարման նպատակով ներկայացվող տվյալների շրջանակներում ներառել իրավասու մարմինների ազդարարման պատասխանատուների կողմից ստացված հաղորդումների ամփոփումը և հրապարակումը՝ ըստ հետևյալ տվյալների.
    1) ազդարարման վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունների և/կամ պարզաբանումների քանակը,
    2) ազդարարման վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունների և/կամ պարզաբանումների տրամադրման եղանակները (հեռախոս, էլեկտրոնային միասնական հարթակ, էլեկտրոնային նամակ, գրավոր, բանավոր).
    3) ազդարարման վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունների և/կամ պարզաբանումների բնույթը (օրինակ՝ խորհրդատվություն ազդարարում ներկայացնելու և հաղորդում կազմելու կարգի մասին),
    4) վիճակագրությունն ընդգրկող ժամանակահատվածը։

«Բ» և «Գ» ենթաբաժիններով նախատեսված առաջարկները ուղղված են azdararir.am հարթակի միջոցով վարվող վիճակագրության բարելավմանը, և միաժամանակ առաջարկվում է դրանք նախատեսել նաև ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշման շրջանակներում։

Միաժամանակ, հարկ է նշել, որ այս առաջարկությունների շրջանակներում ներառված չեն այն տվյալները, որոնք արդեն իսկ նախատեսված են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարությունը 15.03.2018 թվականի N 272-Ն որոշմամբ, և սույն փաստաթղթով ներկայացված առաջարկությունները ուղղված են կատարելագործելու ազդարարման դեպքերի հետ կապված վիճակագրության գործող համակարգը։